

Ս. ՓՐԿԻԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR
87 SALISBURY STREET
WORCESTER, MASS. 01609
TEL. 756-2931

Փետրուար 11, 1969

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Նիւ Եորք, Ն.Ե.

Սիրելի Սրբազան,

Առաջնորդարանի տարեկան հարցարանին հետ, ներփակ
կը գտնէք նաեւ հովուի, ծխական խորհուրդի, մշակութային կեդրոնի
շինութեան յանձնաժողովի եւ այլ կազմակերպութեանց վարչական-եւ-
մտական տարեկան համառօտ տեղեկագիրներու պրակը, ուր միանգամայն
կը գտնուի 1969 տարւոյ ելեւմտացոյցը: Ասոնց կարգին Զերդ Գերա-
շնորհութեան կը ղրկուի ծխական տարեկան ժողովի ատենագրութիւնը
եւ պատգամաւոր Կիլպըրտ Մարգարեանի գիրը:

Ներփակ կը գտնէք նոյնպէս ընտրութեանց երկու
ցուցակներ, ստացուած քուէներով, խնդրելով ընտրեալներու վա-
ւերացումը:

Մաղթելով յաջողութիւն աստուածանուէր Զեր աշ-
խատանքներուն, մնամ

Եղբայրական սիրոյ ողջունիւ
Աղօթակից

Միւռոն Մ. Վրդ. Կրճիկեան
Հոգ. Հովիւ